ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված N 2
«Մասնագիտական կրթության
որակի ապահովման ազգային կենտրոն»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2021թ. հունիսի 18-ի N 1-Լ որոշման

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

Տնօրենի տարեկան հաշվետվություն

Հանրապետի
Ոլորտի Որակ

Երևան-2021

ԵՐԵՎԱՆ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈԱԱԿ-Ը 2020 ԹՎԱԿԱՆԻՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ 4

I. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 7

1. Բարձրագույն կրթական համակարգ 7

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 7

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում 9

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 10

Բուհերի՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր 10

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ 10

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 11

Ինստիտուցիոնալ հավատարմագրում 12

4. Մշտադիտարկումներ 15

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան 17

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18

1. Խորհրդատվությունների տրամադրում ՄՈՒՀ-երին 18

2. Վերապատրաստումներ ՄՈՒՀ-երի համար 18

3. Փորձագետների վերապատրաստումներ 19

4. Կլոր-սեղան քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ 20

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ 20

6. «Ուսանողության ձայն» նախագիծ 21

7. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում 23

Հասարակության հետ կապեր 23

Շփում կայքի միջոցով /ուղղորդող փաստաթղթեր, ուղեցույցեր, հարցազրույցներ/ 24

Շահակիցների հետ հաղորդակցություն սոցիալական ցանցերի միջոցով /բուկլետներ/ 24

Վիճակագրական տվյալներ 25

III. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 26
1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում 26
Հավատարմագրման գործընթացների վերլուծություն 27
Մարդկային ռեսուրսների կառավարում 28
ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախությունը 30
2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գանահտման գործընթացներ 32
3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 32
IV. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 34
1. Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն 34
2. Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խումբ 35
3. Միջազգային ծրագրեր 36
ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր 36
ԵՄ «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագիր 37
Էրազմուս + DEQAR CONNECT ծրագիր 38
2. Տարածաշրջանային համագործակցություն 38
V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 40

ՈԱԱԿ-Ը 2020 ԹՎԱԿԱՆԻՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ

Բուհերի մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավումների խթանում

- Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում, պայմանավորված նաև առցանց կրթության մարտահրավերներով, ներդրվել է ընտրված երեք կրթական ծրագրերի շրջանակներում փորձագետների կողմից մասնագիտական առարկաների ուսանողներին տրվող հանձնարարականների ուսումնասիրության և փորձագետների կողմից ՄԿԾ պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ մասանագիտական հաղորդակցության իրականացման մեթոդը:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրումների շրջանակներում փորձագետները շարունակել են դիտարկել առցանց դասընթացներ, ամփոփիչ ատեստավորումներ, ուսումնասիրել են ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր: Իսկ արդյունքները վերլուծվում և ներկայացվում են փորձագիտական զեկույցներում:
- Ընդլայնվել է ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը, որը հնարավորություն է տալիս դիտարկելու բուհերի մասնագիտությունների կրթական ծրագրերը:

Բուհերում որակի ներքին ապահովման նոր մոտեցումների և այլընտրանքային մեթոդների ներդրման խթանում՝ պայմանավորված առցանց ուսուցման մարտահրավերներով

- Բուհերի որակի ներքին ապահովման կենտրոնների հետ շարունակական քննարկումների և միջազգային փորձի ուսումնասիրման միջոցով, մշակվել և բուհերին առաջարկվել է առցանց ուսուցման որակի ապահովման գործիքակազմ:
- Մշակվել և ոլորտային բուհերի են ներկայացվել ուղենիշներ համավարակի պայմաններում լաբորատոր և կլինիկական միջավայրում ուսուցման գործնական գնահատման համար:

Շարունակական աջակցություն բուհերում որակի մշակույթի զարգացմանը և որակի անընդհատ բարելավմանը

- ՈԱԱԿ-ը, պետական և ոչ պետական բուհերում շարունակել է որակի ապահովման համակարգի մշտադիտարկումները, որոնք նպատակ ունեին նաև քննարկելու առցանց ուսուցման մարտահրավերները:
- Համավարակի պայմաններում մեծացել է շահակիցների հետ հաղորդակցության ծավալը՝ նպաստելու փորձի փոխանակմանը և խնդիրներին միասնական լուծումներին:

Փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում

- Ներդրվել է տարբեր բուհերում լավագույն դասախոսներ ճանաչված մասնագետների հավաքագրման և փորձագիտական վերապատրաստումներում ներգրավելու մեխանիզմը:
- Փորձագետների բազան ընդլայնվում է բուհում և ՄԿՈՒ հաստատություններում դասավանդման որակի լավացման սեփական փորձ ունեցած դասախոսներով:

Որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության մեշացման խթանում և կարողությունների զարգացում

- ՈԱԱԿ-ի կազմակերպած բազմաթիվ գործընկերային աշխատաժողովների արդյունքում բացահայտվել է, որ ուսանողները դասախոսների հետ կարող են պրոակտիվ մասնակցել հատկապես առցանց ուսուցման միջավայրում պրակտիկ բովանդակությամբ ուսումնական նյութերի պատրաստմանը:
- Ուսանողների տարբեր խմբերի հետ բազմաթիվ քննարկումների և իրականացված հարցումների արդյունքում կատարվել է վերլուծություն առցանց ուսուցման կազմակերպման և իրականացման մարտահրավերի վերաբերյալ:
- ՈԱԱԿ-ի ուսանողների հավաքագրման մոտեցումը, որպես լավագույն փորձ ներկայացված է Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման ասոցիացիայի (ENQA) կողմից հրապարակված «Շահակիցների մասնակցությունը որակի արտաքին ապահովման գործընթացներում» միջազգային հետազոտությունում:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման շարունակական զարգացման մշակույթի ներդնում

- Ընդլայնելով ՄԿՈՒ հաստատությունների հետ շարունակական աշխատանքները՝ ՈԱԱԿ-ն իրականացրել է «ՆՄՄԿՈՒ հաստատություններ-աշխատաշուկա. մարզային կարիքների տեսանկյուն» թեմատիկ հետազոտություն, մշակել է և ՄԿՈՒ հաստատություններին է ներկայացրել «ՆՄՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ մոտեցումները», որի հիմքում առաջարկում է ներդնել տեղական գործատուների հետ ընդհանուր ռազմավարության վրա հիմված համագործակցության ցուցիչ:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում, նպաստելով ՄԿՈՒ հաստատություններում փորձագիտական կարողությունների ստեղծմանը, ՈԱԱԿ-ը ներդրել է «SWOT վերլուծությունից-ինքնավերլուծություն մեթոդը»:

ՈԱԱԿ-ը որպես եվրոպական կրթական համակարգին ինտեգրված որակի ապահովման կառույց

- ՈԱԱԿ-ը մասնակցում է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման համատեղ գործընթացներին. Հավատարմագրումներ, փորձի փոխանակումներ, ելույթներ:
- ՈԱԱԿ-ի նոր մշակված հավատարմագրումների գրանցամատյանը հասանելի է Փորձագիտական զեկույցների եվրոպական ռեգիստրում /DEQAR/ :
- Շարունակելով տարածաշրջանում կապերի ընդլայնումը՝ ՈԱԱԿ-ը լեհ փորձագետների հետ մեկնարկել է վեբինարների շարք նվիրված ուսուցման որակի բարելավմանը:

Շահակիցների հետ անընդհատ հաղորդակցության ապահովում

- ՈԱԱԿ-ը շարունակում է ոլորտի շահակիցների տարբեր խմբերի հետ ինտենսիվ հաղորդակցությունը մի շարք թեմաներով.
    - Առցանց ուսուցման մարտահրավերը և լավ փորձի բացայահտում
    - Առցանց ուսուցման որակի ներքին ապահովման այլընտրանքային մոտեցումների ներդրում
    - Առցանց տարբերակով հավատարմագրումների կազմակերպում և իրականացում և ռիսկերի դուրսբերում
    - Ուսանողների արդյունավետ գնահատում

I. ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Բարձրագույն կրթական համակարգ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

2020 թվականին ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ նախատեսել էր իրականացնել լ 8 բարձրագույն ուսումնական հետևյահաստատություններում.

- Արցախի պետական համալսարան,
- Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարան,
- Արցախի Գրիգոր Նարեկացի համալսարան,
- Երևանի պետական համալսարան,
- Գորիսի պետական համալսարան,
- Երևանի Գլաձոր համալսարան,
- Եվրոպական համալսարան,
- Շիրակի պետական համալսարան:

Հաշվետու տարվա ընթացքում համավարակով և երկրում պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ անվտանգության և առողջապահական իրավիճակից ելնելով, հավատարմագրման գործընթացները մասամբ հետաձգվեցին՝ ուսումնական հաստատությունների հետ քննարկումների արդյունքում:

Ստեղծված իրավիճակը գնահատելու և հնարավոր լուծումներ տալու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվեցին մի շարք հանդիպումներ շահակիցների հետ. հավատարմագրման գործընթացում գտնվող հաստատությունների ղեկավար անձնակազմերի, որակի պատասխանատուների, գործընթացում ներգրավված փորձագետների, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների հետ: Քննարկումներ իրականացվեցին նաև ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ:

Կազմակերպվող պարբերական հանդիպումներին զուգահեռ ՈԱԱԿ-ի կողմից ուսումնասիրվում էր նաև միջազգային գործընկեր կազմակերպությունների փորձառությունն ու հավատարամագրման գործընթացների իրականացումը՝ համավարակի պայմաններում:

Արդյունքում ՈԱԱԿ-ը մշակեց և շահակիցներին ներկայացրեց առցանց կրթության որակի ապահովման որոշ ուղենիշներ, որոնք, ըստ շահակիցների, բուհի տարբեր գործընթացների համար հիմք ծառայեցին:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի առցանց տարբերակով կազմակերպման առանձնահատկությունները, հաստատությունների մոտ առաջացող հնարավոր խնդիրները, փորձաքննության հավաստիությունն ապահովող մեխանիզմները դուրս բերելու նպատակով կազմակեերպվող հանդիպումների հետ մեկտեղ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվեց նաև հարցում շահակիցների շրջանում: Հանդիպումների և հարցաշարի արդյունքները վերլուծվեց, գնահատվեց առցանց տարբերակով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի փորձաքննության բոլոր փուլերի

իրականացման ռիսկերը: Վերլուծությունները ներկայացվել են նաև ԿԳՄՍ նախարարությանը:

Վերլուծությունների արդյունքում մշակվեց ինստիտուցիոնալ հավատարմագրման առցանց տարբերակով կազմակերպման ընթացակարգ, որում դուրս են բերվել հավելյալ պահանջվող տեղեկատվությունը, պայմանները, որոնք հաստատությունը պետք է ներկայացնի և ապահովի հավատարմագրման առցանց կազմակերպման համար: Առցանց եղանալով հավատարմագրման գործընթացներից առաջ հաստատություններին ներկայացվում էր առցանց տարբերակով հավատարմագրման գործընթացի ընթացակարգը:

Հավատարմագրման ենթակա բոլոր ուսումնական հաստատությունները ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարում ներկայացրեցին՝ 3 մասնագիտության կրթական ծրագրերի 5-ական դասընթացների և ավարտական աշխատանքների պաշտպանության ձայնագրություններ առցանց եղանակով իրականացված:

Ռեսուրսների դիտարկման համար հավատարմագրման ենթակա ուսումնական հաստատությունները էլեկտրոնային տարբերակով պարտավորվեցին ներկայացնել առկա կրթական ռեսուրսների, բոլոր ենթակառուցվածքների տեսաձայնագրությունները, ինչպես նաև այն բոլոր փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, որոնք սովորաբար դիտարկվում էին այցի ընթացքում:

Ուսումանական հաստատությունները, փորձագետները և ՈԱԱԿ-ի անձնակազմը վերապատրաստվեց առցանց տարբերակով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ իրականացնելու համար:

Նախապատրաստական բոլոր աշխատանքների ավարտից հետո, հաշվետու տարվա երրորդ եռամսյակում առցանց տարբերակով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ իրականացվեցին հետևյալ բուհերում.

- Եվրոպական համալսարան,
- Երևանի Գլաձոր համալսարան

Հավատարմագրման առցանց եղանակով փորձաքննությունն իրականացրել են փորձագիտական խմբերը, որոնք ձևավորվել են ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր փորձագիտական խմբում ընդգրկվել է 3 տեղացի, 1 միջազգային փորձագետ և 1 ուսանող ՈԱԱԿ-ի՝ տեղացի, միջազգային և ուսանող-փորձագետների, բազաներից:

Հաշվետու տարում փորձագետներ են ներգրավվել հետևյալ կազմակերպություններից.

- Միացյալ Թագավորության Բաթ Սփա համալսարան,
- Աֆրիկայի զարգացման բանկ /ADB/:

Տեղացի և ուսանող փորձագետներ ներգրավվել են մի շարք հայաստանյան բուհերից, մասնավորապես՝

- Երևանի պետական համալսարան,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,

- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան,
- Հայ-ռուսական համալսարան,
- Շիրակի պետական համալսարան,
- Ստեփանակերտի Մ. Մաշտոցի համալսարան
- Գավառի պետական համալսարան

Ինստիտուցիոնալ առցանց եղանակով հավատարմագրման համար կիրառվել է ZOOM հարթակի հնարավորությունները, այդ թվում թարգմանության գործառույթը:

Առցանց եղանակով հավատարմգրումներ իրականացվել են ըստ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի, որի ընթացքում.

1. իրականացվել է ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն, առցանց դասալսումներ, ուսումնական գործընթացի դիտարկումներ և փորձագիտական առցանց այցեր ուսումնական հաստատություններ,
2. սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները,
3. փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որտեղ մասնավորապես շեշտադրվել է առաջիկայում բուհերի կողմից բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտի իրականացումը: Թերությունների վերացման ծրագրերը գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

Հաշվետու տարում համավարակով պայմանավորված հավատարմագրման 5 հաստատությունների գործընթացներ նախատեսվում է իրականացնել 2021 թվականին:

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2020 թվականին Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ Աղյուսակ 1-ում ներկայացված 2 բուհի և 1 ՄՄՈՒՀ հաստատության վերաբերյալ:

Աղյուսակ 1

	Հաստատության անվանումը	**Շնորհված հավատարմագրումը**
1	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 տարի ժամկետով
2	ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով
3	Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել հավատարմագրման պետական գրանցամատյանում (տես հղման ներքո http://bit.ly/2MxUIu5):

Բուհերի՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրեր

2019-2020 թթ. հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները, հետևելով Հավատարմագրման կարգի պահանջներին, ՈԱԱԿ են ներկայացրել փորձագիտական զեկույցներում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի որոշման հիման վրա, բուհերը վերանայել են իրենց ներկայացրած պլանները՝ ներառելով բոլոր կրթական ծրագրերի բարելավումների և ծրագրերի ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ կետեր:

Հավատարմագրման կարգի համաձայն 4 կամ 6 տարի հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները 2 տարին մեկ անգամ, իսկ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ, պարտավոր են իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

Նախատեսված ժամկետներում 2020թ. հաշվետվություններ են ներկայացրել Ռազմական ավիացիոն համալսարանը և Եվրասիա միջազգային համալսարանը:

2. Ծրագրային հավատարմագրման գործընթացներ

2020 թվականին մասնագիտությունների կրթական ծրագրերի շարունակական բարելավումը խրախուսելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման երկրորդ և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առաջին շրջափուլի ընթացքում փորձագետներն ուսումնասիրել են հավատարմագրման ենթակա բուհերում և քոլեջներում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի մեծ մասը, դիտարկվել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Հավատարմագրման առցանց գործընթացի առանձնահատկությունից ելնելով՝ ուսումնական հաստատությունները ներկայացրել են դիտարկվող երեք կրթական ծրագրերի համար մասնագիտական առարկաների շրջանակներում տրվող հանձնարարականները /միջանկյալ և ավարտական/: Նախնական գնահատման ընթացքում փորձագետները դիտարկել են հանձնարարականները և պատրաստել են հարցադրումներ առցանց այցի ընթացքում մասնագիտական քննարկում իրականացնելու համար:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում յուրաքանչյուր փորձագետ, դիտարկվող երեք ՄԿԾ-ների շրջանակներում, մասնագիտական քննարկում է ունեցել ՄԿԾ պատասխանատուների, դասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների

հետ՝ նպատակ ունենալով դուրս բերելու ուսանողներին տրվող հանձնարարությունների արդյունավետությունը և ազդեցությունը ուսանողի առաջընթացի վրա: Հանդիպումները տեղի են ունեցել զուգահեռ, այնուհետ ամփոփվել են արդյունքները: Հանդիպումների արդյունավետությունը քննարկվել է փորձագետների հետ: Քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ տվյալ մեթոդով փորձագետները հնարավորություն են ունենում խորությամբ դիտարկել ՄԿԾ-ն և վերլուծել ՄԿԾ-ի ողջ տրամաբանությունը և ուսանողների ձեռքբերված վերջնարդյունքները:

Բուհերն ինստիտուցիոնալ էլեկտրոնային տվյալների շտեմարանում լրացրել են տվյալներ ուսանողների և շրջանավատների թվաքանակի, զբաղվածության և առաջընթացի վերաբերյալ բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի կտրվածքով, որը հնարավորություն է տալիս պարբերաբար մշտադիտարկել բուհերի առաջընթացը:

2020 թ. իրականացված 12 ինստիտուցիոնալ հավատարմագրումների շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել է շուրջ 36 կրթական ծրագիր:

Ծրագրային հավատարմագրումը որպես կրթության ամբողջական որակի ապահովման մարտահրավեր դիտարկելով՝ ՈԱԱԿ-ը ինչպես 2019 թվականին, այնպես էլ 2020 թվականին շարունակել է քննարկումները ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ծրագրային հավատարմագրման դրույթների ներառման ուղղությամբ, ներկայացրել է իր առաջարկությունների փաթեթը՝ ըստ որի օրենքի նախագծում ներառվել է կրթական ծրագրերի կամ դրանց խմբերի հավատարմագրման իրականացումը որպես պարտադիր պայման, պարտադիր է նաև առաջին շրջափուլի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում նոր ներդրված կրթական ծրագրերի հավատարմագրման իրականացումը:

Օրենքի նախագծում, ՈԱԱԿ, ԿԳՄՄՆ, բուհեր ֆորմատով անընդհատ քննարկումների և առաջարկությունների արդյունքում, ավելացվել է ծրագրային փորձաքննություն մի նոր եղանակ՝ բուհերի կողմից իրենց ծրագրերի ինքնագնահատում և արդյունքների ներկայացում ՈԱԱԿ: Սակայն քննարկումները նախագծի վերաբերյալ դեռևս շարունակվելու են 2021 թվական, որտեղ առավել հստակություններ կմտցվեն ինչպես ծրագրային հավատարմագրման, այնպես էլ ինստիտուցիոնալ հավատարմագրման դրույթներում:

3. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

ՄԿՈՒ հաստատությունների ներգրավումը որակի ապահովման գործընթացներում շարունակում է լինել ՈԱԱԿ-ի գործունեության առաջնահերթությունից՝ նպատակ ունենալով խրախուսել կրթության որակի շարունակական բարելավման նախադրյալների ստեղծումը ՄԿՈՒ հաստատություններում: Որակի մշակույթը հաստատություններում տարածելու նպատակով ՈԱԱԿ-ը կազմակերպում և մասնակցում է ոլորտի շահակիցների հետ քննարկումների և կլոր սեղանների, իրականացնում է փորձագետների և ՄԿՈՒ հատատությունների աշխատակիցների վերապատրաստումներ, որը նպաստում է որակի մշակույթի տարածմանը և հիմքեր է ստեղծում ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների համար:

Ներկայումս ՄԿՈՒ ոլորտում շարունակվում են բարեփոխումները կառավարման համակարգում, կանոնակարգվում են տարբեր գործընթացներ և ներդրվում է որակի ապահովման ներքին համակարգը, արդեն կան մի շարք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք սկսել են որակի ներքին ապահովման համակարգի ներդրման գործընթացները և արձանագրել են որոշակի արդյունքներ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավում, կարիքների բացահայտում և այլն:

Դեռևս շարունկում է մարտահրավեր մնալ ՄԿՈՒ հաստատությունների ինքնավարության բարձրացումը, որակի ապահովման համակարգում ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք կիրառումը, գործատուների կողմից ՄԿՈՒ հաստատությունների որակավորումների ճանաչելիությունը, դասախոսական կազմի կատարելագործմանն ուղղված ծրագրերի բացակայությունը, երիտասարդ դասախոսների պակասը և այլն: Շարունակում է մարտահրավեր մնալ նաև ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների հետ արդյունավետ համագործակցությունը և համատեղ ռազմավարության մշակումը, որը հանգեցնում է նրան, որ աշխատաշուկայում տեղի ունեցող արագ փոփոխություններին ՄԿՈՒ հաստատությունները չեն կարողանում զուգահեռ քայլել, քանի որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար առկա չեն ֆինանսական և նյութատեխնիկական բավարար ռեսուրսներ:

ՄԿՈՒ ոլորտի համար առաջընթաց է դիտարկվում այն, որ տարեցտարի ավելանում են դուալ կրթական ծրագրերը, որի միջոցով հաստատությունները որոշակիորեն փորձում են գործատուների հետ համագործակցությունն ավելի սերտացնել:

2020թ.-ը մարտահրավեր էր բոլոր ուսումնական հաստատությունների համար ողջ աշխարհում, որից զերծ չէին նաև ՄԿՈՒ հաստատությունները: COVID-19 համավարակի պայմաններում ՄԿՈՒ հատատությունները ուսումնական գործընթացի մի զգալի հատված ստիպված եղան իրականացնել առցանց կամ որոշ դեպքերում հիբրիդային եղանակով, որը մեծ մարտահրավեր էր: Դասախոսական կազմը չուներ համապատասխան հմտություններ առցանց միջավայրում դասավանդումը կազմակերպելու համար: Մարտահրավերներին արձագանքելու և ՄԿՈՒ-ներին գործընկերային աջակցություն ցուցաբերելու նպատակով ՈԱԱԿ-ը սկսեց մշակել ուղեցույցներ, որտեղ առաջարկում էր առցանց ուսուցման որակի ապահովման որոշ ուղենիշներ՝ հիմնված միջազգային մոտեցումների վրա:

Ինստիտուցիոնալ հավատարմագրում

2019-2020 թվականներին «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցությամբ ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ն իրականացրել է 4 գյուղատնտեսական քոլեջների հավատարմագրում: Հաշվետու տարվա սկզբին տեղի են ունեցել փորձագիտական այցեր, որից հետո ներկայացվել են փորձագիտական զեկույցները ԿԳՄՍ նախարարություն և ԵՄ բյուջետային աջակցությամբ ծրագրին: ՄԿՈՒ հաստատությունները ներկայացրել են նաև թերությունների վերացման ծրագրեր, որոնք գնահատվել են փորձագիտական խմբերի կողմից:

2020թ.-ին ԿԳՄՍ նախարարությունը ֆինանսավորել է 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացների իրականացումը:

ՈՒսումնական հաստատությունների ընտրության նպատակով ՈԱԱԿ-ի կողմից մշակվել է ՄԿՈՒ հաստատություն-գործատու համագործակցության վերաբերյալ էլեկտրոնային հարցաշար և տրամադրվել է բոլոր ՄԿՈՒ հաստատություններին: Հարցաշարը պարունակում է տվյալներ ՄԿՈՒ հաստատությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի, գործատու- դասախոսների, ուսանողների թվաքանակի վերաբերյալ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընտրության նպատակով ՈԱԱԿ–ի կողմից իրականացվել է նաև «ՆՄՄԿՈՒ հաստատություններ-աշխատաշուկա. մարզային կարիքների տեսանկյուն» թեմատիկ հետազոտություն, որի նպատակն է եղել հասկանալ, թե ինչ դեր և նշանակություն ունի միջին մասնագիտական կրթություն ստացած անձն աշխատաշուկայում և ՄԿՈՒ ոլորտի որ մասնագիտություններն են առավել պահանջարկված: ՈԱԱԿ–ն իրականացրել է նաև երկրի ռազմավարական առաջնահերթությունների ուսումնասիրություն:

Վերլուծելով և համադրելով վերը նշված հավաքագրված բոլոր տվյալները՝ կատարվել է նախնական ընտրություն և համաձայնեցվել է ԿԳՄՄՆ-ի հետ: Այսպիսով հաշվետու տարում ընտրվել են հետևյալ 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝

1. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ,
2. Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ,
3. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ,
4. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ,
5. Արարատի պետական քոլեջ:

ՈԱԱԿ–ը, հաշվի առնելով ՄԿՈՒ ոլորտի առանձնահատկությունները և վերը նշված հետազոտությունները, մշակեց «ՆՄՄԿՈՒ հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ՈԱԱԿ մոտեցումները» փաստաթուղթը, որը սահմանում է ինստիտուցիոնալ հավատարմագրման խոշոր արդյունքները և հիմնական շեշտադրումները: Փաստաթուղթը քննարկվել և ներկայացվել է բոլոր հաստատություններին: Հավատարմագրման գործընթացի ընթացքում փորձագետները նույնպես առաջնորդվել են մշակված փաստաթղթով:

Հաջորդիվ, ՈԱԱԿ-ն իրականացրել է ընտրված հինգ ՄԿՈՒ հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում, որից հետո հաստատությունների կողմից գրվել են SWOT վերլուծություններ: ՄԿՈՒ հաստատությունների փորձագիտական ներուժի զարգացման նպատակով ՈԱԱԿ–ը ՄԿՈՒ հաստատությունների SWOT վերլուծությունները դիտարկել է այդ հաստատություններից ընտրված երկու աշխատակիցների հետ միասին: Աշխատակիցներն ընտրվել են ուսումնական հաստատությունների կողմց՝ հաշվի առնելով հետևյալը՝ նորարական և ստեղծագործական մտածողությունը, մասնագիտական առարկաներ դասավանդելը, և ՄԿՈՒ ոլորտին լավ տիրապետելը: Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունից ընտրվել է 2 աշխատակից, ՈԱԱԿ–ի համակարգողները

և ընտրված աշխատակիցները, ովքեր հանդես են եկել փորձագետի դերում, դիտարկել են SWOT վերլուծությունները՝ վեր հանելով հիմնական խնդիրները։

SWOT վերլուծությունների դիտարկումներից հետո ՈԱԱԿ–ն իրականացրել է մեկօրյա առցանց այցեր, որի նպատակն է եղել ձևավորել որակի ապահովման խմբեր, որոնք կմասնակցեն ինքնավերլուծության իրականացմանը։ Այցերի արդյունքում ՈԱԱԿ համակարգողների կողմից կազմվել են հաշվետու զեկույցներ՝ ամփոփելու արդյունքները և դուրս բերելու հաստատությունների ուժեղ և բարելավման ենթակա կողմերը։

Այնուհետ ըստ սահմանված ժամանակացույցի, ընտրված հինգ հաստատությունները իրականացրել և ՈԱԱԿ-ին են ներկայացրել ինքնավերլուծությունները, որից հետո ՈԱԱԿ-ը կազմել և հաստատություններին է ներկայացրել փորձագիտական խմբերը հաստատման։ Փորձագետների ընտրության համար կազմակերպվել են վերապատրաստումներ։ Փորձագիտական խմբերի ղեկավարները ընտրվել են բուհերից՝ հաշվի առնելով նրանց փորձագիտական աշխատանքի փորձը։ Փորձագիտական խմբերում ներգրավված են եղել ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչներ և ուսանողներ։

Հաշվետու տարում տեղի են ունեցել փորձագիտական այցեր առցանց եղանակով։ Փորձագիտական խմբերը իրականացրել են առցանց դասալսումներ, դիտարկել են կրթական ծրագրերը և ուսանողներին տրվող հանձնարարականները, ինչպես նաև հանդիպումներ են ունեցել քոլեջների տարբեր շահակիցների հետ։

Ամփոփելով արդյունքները պատրաստվել են փոձագիտական նախնական զեկույցները և ներկայացվել են ուսումնական հաստատություններին։

Բոլոր փորձագիտական զեկույցները ներկայացվել են ԿԳՄՍ նախարարություն։

ՈԱԱԿ-ը նաև նախաձեռնել է քոլեջների հավատարմագրման գործընթացի փորձագիտական զեկույցներից առկա վիճակի վերաբերյալ վերլուծության իրականացումը, որի արդյունքները կպատրաստվեն ևկիրապարակվեն առաջիկա տարվա ընթացքում։

2020թ.-ին ինստիտուցիոնալ հավատարմագրման առնցանց եղանակով գործընթաց է տեղի ունեցել Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջում։ Քոլեջը դիմել է հավատարմագրման սեփական ֆինանսական միջոցներով։

2020թ.-ին վերը նշված սկզբունքներով և ԿԳՄՍ նախարարության հետ քննարկումների արդյունքում ընտրվել են 2021թ.-ին հավատարմագրվող ՄԿՈՒ 5 հաստատությունները՝

1. Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջը,
2. Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը,
3. Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջը,
4. Աբովյանի պետական էներգետիկական պետական քոլեջը,
5. Դիլիջանի բժշկական պետական քոլեջը։

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը ՄԿՈՒ ոլորտում իրականացրած միջոցառումների արդյունքների մասին պարբերաբար հաշվետվություններ և տեղեկատվություններ է տրամադրել ԿԳՄՄՆ-ին։

4. Մշտադիտարկումներ

Նպատակ ունենալով խթանել մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի ներդրումը և անընդհատ զարգացումը՝ ՈԱԱԿ-ը պարբերաբար մշտադիտարկման գործընթացներ է իրականացնում հավատարմագրված և դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած ուսումնական հաստատություններում: Հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում դիտարկվում են նախորդ հավատարմագրումից հետո բուհի արձանագրած առաջընթացը, բուհերի թերությունների վերացման ծրագրի իրականացման ընթացքը, որակի ապահովման համակարգի կողմից բացահայտված լավագույն փորձը, բուհում դեռևս առկա մարտահրավերները, ինչպես նաև դրանց հաղթահարման ուղիները: Դեռևս հավատարմագրման գործընթաց չանցած քոլեջներում և բուհերում դիտարկվում է որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքը, ներդրման հետ կապված դժվարությունները և նախորդ մշտադիտարկումից հետո ունեցած առաջընթացը: Սա նաև լրացուցիչ հնարավորություն է հաստատության համար՝ պատրաստվելու իր առաջիկա հավատարմագրման գործընթացին:

2020 թվականին ՈԱԱԿ-ն իրականացրել է 34 մշտադիտարկում, որոնցից 10-ը՝ քոլեջներում: Մշտադիտարկված քոլեջների թվում էին նաև 2020-2021 թվականներին հավատարմագրման նախապատրաստվող քոլեջները: 2020 թվականին հավատարմագրվող 5 քոլեջները մշտադիտարկումից առաջ նաև SWOT վերլուծություն են իրականացրել, որոնք այնուհետև քննարկումների ընթացքում դիտարկվել են քոլեջների կողմից ներկայացված ներքին փորձագետների և ՈԱԱԿ համակարգողների կողմից: Քոլեջներում ներքին փորձագետների ներգրավումը նպատակ ունի նաև ձևավորելու որակի ներքին ապահովման խմբեր, ինչը կնպաստի որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանը և փորձագիտական հանրույթի ձևավորմանը: Գործընթացների ընթացքում ուսումնասիրվել են նաև քոլեջների ռազմավարական ծրագրերը, վերհանվել են երկրի ոլորտային առաջնահերթություններից բխող կարիքները ռազմավարական կառավարման հիմքեր ստեղծելու նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում որակի ներքին ապահվման համակարգի և կրթական ծրագրերի 24 մշտադիտարկում է իրականացվել նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հավատարմագրված բուհերի դեպքում նախորդ հավատարմագրման արդյունքում կազմված թերությունների վերացման ծրագրի ուսումնասիրմանը զուգընթաց դիտարկվել են նաև կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված բուհի գործընթացները, COVID-19 համավարակով պայմանավորված առցանց, այնուհետ հիբրիդային ուսուցման գործընթացները՝ դիտարկման առանցքում ունենալով սովորողների մասնագիտական առաջընթացի ապահովումը և որակավորումների արժանահավատ շնորհումը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում ոլորտային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ մշտադիտարկման գործընթացներում ներգրավվել են նաև ոլորտային

փորձագետներ, ինչը հնարավորություն է տվել առավել խորքային ուսումնասիրություններ անելու և կրթական ծրագրերի վերաբերյալ համապարփակ քննարկումներ կազմակերպելու:

Դեռևս չհավատարմագրված բուհերի դեպքում ուսումնասիրվել են որակի ներքին ապահովման համակարգի ունեցած փորձառությունը, ինստիտուցիոնալ կառավարման մեխանիզմները, առցանց ուսուցման հիմնահարցերը և հաստատությունների զարգացման ուղղությունները:

Մշտադիտարկումների ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել բուհի ղեկավար կազմի, կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների, ուսանողների և որակի ներքին ապահովման պատասխանատուների հետ: Կատարվել է փաստաթղթային ուսումնասիրություն, իսկ մշտադիտարկման այցի ավարտին բուհի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ամփոփվել են ուսումնասիրության արդյունքները, բացահայտված լավագույն փորձը և դեռևս առկա խնդիրները:

Մշտադիտարկման արդյունքում մասնագիտական ուսումնական հաստատությունների համար բացահատված ուժեղ կողմերն են.

1. Հավատարմագրված ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի շարունակական բարելավմանը միտված գործընթացների իրականացումը:
2. Ռազմավարական ծրագրով, թերությունների վերացման ծրագրով, այնուհետև բուհերի ստորաբաժանումների միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերով սահմանված ռեսուրսների, պատասխանատուների և ժամկետների հստակ սահմանումը, ինչը հնարավորություն կտա բուհերին հետևել ընթացիկ առաջընթացին, տվյալներ հավաքագրել և կառավարչական որոշումներ կայացնելիս հենվել հստակ տվյալների վրա:
3. Առցանց միջավայրի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ նոր մոտեցումների ներդրումը, դասավանդման և ուսումնառության միջավայրի համապատասխանեցումը առկա մարտահրավերներին. գնահատման համակարգի հարմարեցումը, այդուհանդերձ խնդիր է:
4. Որոշ ուսումնական հաստատությունների կողմից համավարակը որպես հնարավորություն դարձնելը թույլ է տվել դասախոսական կազմի ներգրավել նաև այլ համալսարաններից, ինչը լրացուցիչ հնարավորություն է հատկապես տարածաշրջանային բուհերի համար:
5. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դուալ կրթաձևով իրականացվող կրթական ծրագրերում գործատուների ներգրավվածությունը ուսումնական գործընթներում: Այդուհանդերձ գործատուների պահանջների հիման վրա կրթական ծրագերի ներդրումը, սերտ համագործակցությունը և ռեսուրսների համատեղ կիրառումը դեռևս խնդրահարույց է:

Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների բարելավման ենթակա կողմերն են.

1. միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման մեխանիզմների դեռևս ներդրման փուլում լինելը,
2. երկարաժամկետ ռազմավարության և միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանների փոխկապակցվածության անհրաժեշտությունը,
3. տվյալների հավաքագրման մեխանիզմների բազմազանեցումը, շարունակական հավաքագրումը, ինչը կնպաստեր կառավարչական որոշումների արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի կառավարման մեխանիզմների ներդրմանը,
4. հետազոտական և գիտական ներուժի ոչ լիարժեք գործարկումը, որը միտված կլիներ երկրի համար ռազմավարական առաջնահերթություն հանդիսացող ոլորտներում, ինչպես նաև ուսումնական գործընթացներում դրանց արդյունքների ներդրմանը,
5. որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի դեռևս ոչ լիարժեքորեն կիրառումը մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից:

5. Էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների շտեմարան

Կարևորելով մասնագիտական ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը՝ հաշվետու տարում հավատարմագրման գործընթացում գտնվող մասնագիտական ուսումնական հաստատությունները շարունակել են էլեկտրոնային ինստիտուցիոնալ տվյալների հավաքագրման շտեմարանի լրացումը՝ ներկայացնելով տվյալներ և ցուցանիշներ ուսանողների և շրջանավարտների, դասախոսական կազմի, մասնագիտական կրթական ծրագրերի, ուսումնական ռեսուրսների, որակի ապահովման համակարգի արդյունավետության վերաբերյալ: Հաշվի առնելով համավարակով պայմանավորված առցանց ուսուցմանն անցնելու գործընթացը՝ ուսումնական հաստատությունները ներկայացրել են նաև իրականացվող դասընթացների և ավարտական աշխատանքների ձայնագրությունները: ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը հնարավորություն է տալիս պարբերաբար վերանայել և թարմացնել տվյալները, որոնք մշտադիտարկումների ընթացքում հաշվի են առնվում:

Ներկայումս էլեկտրոնային շտեմարանում իր տվյալներն է լրացրել մոտ 65 մասնագիտական ուսումնական հաստատություն:

II. ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորհրդատվությունների տրամադրում ՄՈՒՀ-երին

Համավարակով պայմանավորված 2020 թ. փոխվել է շահակիցներին տրամադրվող խորհրդատվությունների ձևը: Խորհրդատվությունները տրվել են հեռախոսով կամ zoom հարթակի միջոցով: Խորհդատվություն է տրվել հիմնականում քոլեջների տնօրեններին և նորանշանակ ՈԱ աշխատակիցներին /2020թ. ԿԳՄՄՆ քոլեջների օրինակելի հաստիքացուցակում ավելացրեց ՈԱ պատասխանատուի հաստիքը/ և հավատարմագրմանը պատրաստվող Արցախի պետական և ոչ պետական բուհերի աշխատակիցներին:

Բովանդակային առումով փոփոխվեց նաև շահակիցներին 2 ուղղությամբ ավանդաբար տրամադրվող խորհրդատվությունը.

1. 2020թ. մարտ ամսից ՄՈՒՀ-երի գլխավոր մարտահրավերը դարձավ համավարակի պայմաններում ուսումնական պլանների անշեղ իրականացումը և ուսանողներին մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովումը: Ապրիլի սկզբին ՈԱԱԿ-ը հանդիպում նախաձեռնեց բուհերի ՈԱ պատասխանատուների հետ և դուրս բերեց նոր իրավիճակում բուհերի խնդիրները: Վերլուծելով ազգային և միջազգային առաջավոր փորձը ՈԱԱԿ-ը խորհրդատվական ուղեցույցներ նախապատրաստեց և քննարկումներ կազմակերպեց հետևյալ թիրախային ոլորտների բուհերի համար.
    - Արվեստի ոլորտի բուհերի ներկայացուցիչների հետ
    - Բժշկական բուհերի ներկայացուցիչների հետ
    - Ճարտարագիտության, ռազմական, ոստիկանության ոլորտի բուհերի ներկայացուցիչների հետ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման քոլեջների ընտրության համար կազմվեց հարցաշար, որը պետք է գնահատեր քոլեջ-աշխատաշուկա կապը: Հարցաշարի լրացումից հետո հանդիպում եղավ ԿԳՄՄՆ փոխնախարարի հետ և 2 հանդիպում լավագույն ցուցանիշ ցույց տված քոլեջների ներկայացուցիչների հետ: Հանդիպումներ կազմակերպվեցին նաև հավատարմագրման համար ընտրված քոլեջների ուսանողների և հնարավոր փորձագետների հետ:

Արցախի Հանրապետության ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ մինչև Արցախյան պատերազմը սկսվելը խորհրդատվություններ տրամադրվեցին Արցախի Հանրապետության բուհերի համար:

2. Վերապատրաստումներ ՄՈՒՀ-երի համար

Հաշվետու տարում կազմակերպվել է Մասնագիտական կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 1 առցանց դասընթաց: Վերապատրաստվել է

ընդհանուր առմամբ 11 հոգի Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտից: Անցած տարիների համեմատ վերապատրաստման ցուցանիշները բավականին ցածր են, որը պայմանավորված է եղել COVID 19 համավարակով: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ փորձարկվել է առցանց վերապատրաստման ձևաչափը: Վերապատրաստման ծրագիրը բարելավվել է և համապատասխանեցվել առցանց ձևաչափին:

Վերապատրաստումից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ վերապատրաստվողների 95%–ը բարձր են գնահատել անցկացված վերապատրաստման արդյունավետությունը, իսկ մասնակիցների 100%–ը բարձր են գնահատել առցանց ձևաչափին համապատասխան դասընթացի վարման մեթոդները: Ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ առցանց ձևաչափը նույնպես արդյունավետ է և հետագայում կիրառելի:

3. Փորձագետների վերապատրաստումներ

Հավատարմագրման ընթացքում հիմնավորված, անկախ և անկողմնակալ փորձագիտական գնահատում ապահովելու համար ՈԱԱԿ-ը պարբերաբար փորձագետների վերապատրաստումներ է իրականացնում:

Հաշվետու տարում ընդհանուր առմամբ վերապատրաստումներին մասնակցել է ՄՈՒՀ-երից 85 աշխատակից՝ դասախոսներ, կառավարման մարմինների աշխատակիցներ: Վերապատրաստումները անցկացվել են առցանց եղանակով: Վերապատրաստվածներից 55-ը եղել են քոլեջների փորձագետներ, 30-ը՝ բուհերի:

2020 թ.-ին շարունակվեց փորձագետների հավաքագրման նոր քաղաքականությունը, որի արդյունքում փորձագետների հավաքագրման աղբյուրների բազմազանություն ապահովվեց: Այսպես.

- ըստ որակավորման ընդգրկվում են ՈԱԱԿ փորձագիտական բազայում գրանցվածները,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ինքնավերլուծության խմբերում ներգրավված աշխատակիցները,
- հրավիրվում են հավատարմագրման գործընթացներում մասնակցած փորձագետների երաշխավորությամբ,
- հրավիրվում են ուսանող-փորձագետների երաշխավորմամբ,
- հրավիրվում են ՄՈՒՀ-երի ՈԱ ղեկավարի երաշխավորությամբ,

- ընտրվում են ՈԱԱԿ-ում կլոր-սեղանների / թեմատիկ, ոլորտային/անցկացման արդյունքում,
- ընտրվում են ՄՈՒՀ-երում ՊԴ կազմի և կառավարիչների հետ անցկացվող ֆոկուս-խմբերի արդյունքում,
- ներգրավվում են ՈԱԱԿ-ում այլ թեմաներով վերապատրաստմանը մասնակցած մասնագետները,
- հրավիրվում են իրենց իսկ դասավանդման փորձը հետազոտող և դրա վերաբերյալ հոդվածներ հրապարակած դասախոսները,
- հրավիրվում են գիտության ոլորտում հայտնի մասնագետները,
- ներգրավվում են ՄՈՒՀ-երի հետ ակտիվ համագործակցող գործատուները:

Փորձագետների վերապատրաստման ծրագրում շեշտը դրվեց ՄՈՒՀ-ի ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացահայտման վրա, որոնք շահակիցների համար հասանելի են և արժանահավատ են դարձնում որակավորումների շնորհումը:

Վերապատրաստումներից հետո անցկացված արդյունավետության գնահատումը ցույց է տվել, որ վերապատրաստվողների ավելի քան 92%-ը բավարարված է անցկացվող վերապատրաստումներից: Վերապատրաստման մասնակիցների կողմից արժևորվում է կոնկրետ դեպքի ուսումնասիրությունն ու դերային խաղերի կիրառումը, որը հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացումներ կազմել փորձագետի աշխատանքի վերաբերյալ:

4. Կլոր-սեղան քննարկումներ/թեմատիկ հանդիպումներ

Նախորդ տարիների համեմատությամբ, համավարակով պայմանավորված, կարիք կար մեծացնելու շահակիցների հետ համագործակցությունը և քննարկելու համավարակի պայմաններում առաջացած մարտահրավերները: Այս առումով ՈԱԱԿ-ը յուրաքանչյուր ամիս կազմակերպել է կլոր-սեղան քննարկումներ ինչպես բուհերի, այնպես էլ ՄԿՈՒ հաստատությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են առցանց կրթության տրամադրման մարտահրավերները, մասնակիցները ներկայացրել են իրենց փորձառությունը: Քննարկումների առանցքում եղել է նաև առցանց կրթության որակի ապահովման խնդիրները: ՈԱԱԿ-ն իր հանդիպումների միջոցով ուղղորդել է ՄՈՒՀ-երին առավել արդյունավետ մեխանիզմների մշակման և իրագործման հարցում: Ընդհանուր առմամբ մոտ 250 շահակից մասնակցել է կլոր-սեղան քննարկումներին:

Առցանց քննարկում է կազմակերպվել նաև բուհերի 15 աշխատակիցների հետ «Ուսանողի գնահատում» թեմայով: Քննարկման արդյունքում բուհերի ներկայացուցիչները կիսվել են արդյունավետ գնահատման վերաբերյալ իրենց բուհերի փորձառությամբ:

5. Որակի ներքին ապահովման պատասխանատուների հանդիպումներ

Հաշվետու տարում հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ քոլեջների ՈԱ կենտրոնների հետ: Առցանց կրթության ՈԱ հարցերի շուրջ ՈԱԱԿ-ը քննարկումներ նախաձեռնեց միջին

մասնագիտական ուսումնական մի շարք հաստատությունների աշխատակիցների հետ (27 հոգի), որից հետո թեմատիկ հանդիպում-քննարկումներ եղան հետևյալ խմբերի հետ.

- տարածաշրջանային և բժշկական պետական քոլեջների տնօրենների և ՈԱ պատասխանատուների,
- բազմագործառութային, տնտեսության որևէ ոլորտի հետ կապված քոլեջների տնօրենների և ՈԱ պատասխանատուների:

Առցանց կրթությանն էին նվիրված նաև բուհերի ՈԱ պատասխանատուների հետ հանդիպումները: Դրանց ընթացքում քննարկվեցին առցանց ուսուցման պայմաններում մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում առաջացած հիմնախնդիրները և մարտահրավերները:

Շահակիցների հետ հաղորդակցության ինտերակտիվ հարթակ է ծառայում նաև ՈԱԱԿ-ի Որակի ապահովման աջակիցների ցանցը: Ցանցի անդամների համար շփումների հարթակ է ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան էջում բացված «Որակի աջակիցներ» անվամբ հատուկ խումբը, որտեղ հաշվետու տարում քննարկվել են առցանց ուսուցման առանձնահատկությունները և տարբեր ուսումնական հաստատությունների փորձառությունը: Նախատեսվում է առաջիկա տարվա ընթացքում ակտիվացնել ցանցի աշխատանքները վեբինարների միջոցով:

6. «Ուսանողության ձայն» նախագիծ

ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագիծը 2011 թվականից սկսած իրականացնում է ուսանող-փորձագետների վերապատրաստումներ՝ ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացրած արդիական թեմաների, խնդիրների վերաբերյալ հետազոտություններ, թեմատիկ վերլուծություններ:

Ուսանող-փորձագետների բազայում ընդգրկված է «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետի դասընթացին մասնակցած շուրջ 400 ուսանող: Ուսանողները մասնակցում են հավատարմագրման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ, կամ ներգրավվում են գործընթացներում որպես պասիվ դիտորդ, համակարգողի օգնական: Հավատարմագրման գործընթացներում մասնակցած ուսանող-փորձագետները ներգրավվում են նաև իրենց ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման գործընթացներում, մասնակցում են ինքնավերլուծության կազմմանն ու ՄՈՒՀ-երում իրականացվող տարբեր հարցումների կազմակերպմանն ու արդյունքների վերլուծությանը:

2018 թվականից սկսած ուսանող-փորձագետների վերապատրաստումներին մասնակից դարձան նաև քոլեջում սովորող ուսանողները:

2020 թվականին ուսանող-փորձագետների բազան համալրվել է շուրջ 70 ուսանողով: Նրանցից 20-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներ են: Վերջին տարիներին հատկապես նախագծի կողմից կազմակերպվող ուսանող-փորձագետի վերապատրաստմանը մասնակցելու ցնկությունը հատկապես մեծացել էր ՀՀ տարբեր մարզերում բնակվող ուսանողների շրջանում, այդուհանդերձ

հեռավորության հետ կապված խնդիրների պատճառով հնարավոր չէր լինում ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը դասընթացներին:

Հաշվետու տարվա ընթացքում համավարակով պայմանավորված դասընթացները կազմակերպվեցին առցանց հարթակում: Սա հնարավորություն տվեց դասընթացներին ներգրավել նաև ՀՀ մարզերում բնակվող ուսանողներին: Հաշվետու տարվա ընթացքում ուսանող-փորձագետի դասընթացին մասնակցած ուսանողների շուրջ 40%-ը կազմում են ՀՀ մարզերում բնակվող ուսանողները:

Հաշվետու տարում «Ուսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպվել են տարբեր բուհերի և քոլեջների ուսանողների հետ հանդիպումներ՝ նվիրված ուսումնառության առանձնահատկություններին, խնդիրներին, որոնք բախվում են ուսանողները առցանց տարբերակով ուսումնառության ընթացքում:

Նախագծի կողմից կազմակերպվել են նաև հանդիպումներ տարբեր բուհերի «Կրթության կառավարում» մասնագիտությամբ սովորող ուսանողների և ՈԱԱԿ մասնագետների մասնակցությամբ հանդիպումներ: Այս հանդիպումները կրում են պարբերական բնույթ. յուրաքանչյուր տարի կազմակերպվող հանդիպումների ժամանակ քննարկվում են ուսանողների կողմից բարձրաձայնվող խնդիրները, կրթական համակարգի բարեփոխումները, ուսանողների առաջարկները տարբեր խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Ապագա կրթության կառավարիչների հետ հանդիպումների ժամանակ ներկայացվում են նաև ՈԱԱԿ-ում իրենց հետագա կարիերայի, աշխատանքային փորձառության հնարավորությունները: Նախագծի, որակի ապահովման գործընթացներում հետաքրքրություն և ակտիվություն դրսևորած ուսանողները աշխատանքի հնարավորություն են ստանում ՈԱԱԿ-ում:

Հաշվետու տարում նախագծի շրջանակներում իրականացվել է ուսանողների մասնակցությամբ հետազոտություն նվիրված ուսանողների աչքերով առցանց կրթության ուժեղ և թույլ կողմերի դուրս բերմանը: Հետզոտության շրջանակներում կազմակերպվեցին ուսանողների հետ մի շարք ֆոկուս-խմբային հարդիպումներ: Ֆոկուսխմբային հանդիպումներին մասնակցել են հիմնականում հետևյալ ոլորտներից. բժշկություն, մանկավարժություն, արվեստ, սպորտ, ճարտարագիտություն, ճարտարապետություն, ռազմական գործ և արտակարգ իրավիճակներ և այլն:

Հանդիպումների ընթացքում ուսանողների հետ քննարկվել են առցանց կրթության կազմակերպման ընթացքում դասախոսների կողմից ընտրված մեթոդները, ուսանողների գնահատումը, կրթական ծրագրերում տեղի ունեցած փոփոխություններն ու դրանց ազդեցությունը դասընթացների վրա, հաստատությունների տեխնիկական հագեցվածությունն ու պատրաստվածության մակարդակը:

Առցանց կրթության կազմակերպման խնդիրների ուսումնասիրության, ֆոկուսխմբային քննարկումներից դուրս բերված վերլուծությունն առավել հստակ պատկեր դուրս բերելու, ինչպես նաև հավաստի թվային տվյալներ ունենալու, հետազոտության շրջանակներում ուսանողների առավել մեծ շրջանակներին ներգրավելու նպատակով իրականացվել է նաև հարցում ՀՀ մի շարք ՄՈՒՀ-երում սովորող ուսանողների առավել լայն շրջանակների հետ:

Հանդիպումների և հարցաշարի արդյունքները վերլուծվել են և քննարկվել ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ: Նախատեսվում է առաջիկա տարվա ընթացքում հրապարակել վերլուծությունը:

Նախագծի ուսանող-փորձագետի դասընթացին մասնակցած ուսանողների համար հավատարագրման գործընթացներում ներգրավվածությունից ու ձեռքբերված պրակտիկ փորձից բացի, հաշվետու տարում ևս, ներկայացվել է նաև այն հնարավության մասին, որի շնորհիվ ուսանողները կարող են դառնալ Եվրոպական ուսանողական միավորման /ESU/ կողմից համակարգվող ուսանող-փորձագետների բազայի անդամ: Սրա շնորհիվ վերապատրաստված և փորձագիտական աշխատանքներին տիրապետող ուսնաողները կարող են ընդգրկվել և մասնակցություն ունենալ եվրոպական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներում որպես ուսանող-փորձագետ: Հաշվետու տարվա ընթացքում նախագծի ուսանողներից ևս մեկը դարձավ վերոնշյալ բազայի անդամ:

Հաշվետու տարում Ուսանողության Ձայն կողմից իրականացված աշխատանքները ընդգրկվեցին Եվրոպական բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիոցիայի (ENQA) կողմից իրականացված Շահակիցների մասնակցությունը որակի արտաքին ապահովման գործընթացներում. (միջազգային) հետազոտության մեջ որպես ուսանողներին որակի ապահովման գործընթացներում ներգրավման լավ փորձի օրինակ: Զեկույցը հրապարակված է ՈԱԱԿ-ի կայք էջում:

7. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովում

Հասարակության հետ կապեր

Հաշվետու տարին աչքի է ընկել ոչ սովորական աշխատանքային պայմաններով և նոր մարտահրավերներով, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել հանրային կապերի ոլորտում ՈԱԱԿ գործունեության վրա: Շուրջ 7 ամիս ՈԱԱԿ-ը և ողջ կրթական համակարգը գործել են COVID-19 համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում, այնուհետև մոտ 4 ամիս էլ՝ պատերազմով պայմանավորված ռազմական դրության պայմաններում: Գործունեության համար ոչ բնականոն այս պայմաններն իրենց ազդեցությունն են թողել թե առաջնահերթությունների, թե ընթացիկ ծրագրերի ձևի և բովանդակության վրա: Այնուամենայնիվ, անկախ գործունեության ոչ սովորակայն պայմաններից, ՈԱԱԿ-ի համար առաջնահերթ է եղել շահակիցների հետ արդյունավետ համագործակցությունը և թափանցիկ գործելաոճը: Հանրային կապերի ոլորտում բոլոր քայլերն ուղղված են եղել այս նպատակների իրագործմանը:

ԶԼՄ-ների միջոցով հաղորդակցություն

Մինչ համավարակը ՈԱԱԿ-ը հյուրընկալվել է Հանրային և «Շանթ» հեռուստաընկերություններին, որտեղ ներկայացրել է կառույցի ձեռքբերումները միջազգային ասպարեզում, ինչպես նաև երկրի ներսում կրթության որակի ապահովման հետ կապված գործընթացները և հաջողությունները:

Համավարակի ընթացքում արդեն ՈԱԱԿ մասնագետները մասնակցել են քննարկումների՝ նվիրված առցանց կրթության որակի ապահովմանը և ի հայտ եկած մարտահրավերներին: Քննարկումը հեռարձակվել է Մեդիա կենտրոնի առցանց հարթակում՝ վերահեռարձակվելով մի շարք առցանզ ԶԼՄ-ներով: Առցանց կրթության որակի ապահովմանն առանձին հրապարակմամբ անդրադարձել է նաև «Առավոտ» օրաթերթը: Իսկ Հանրային ռադիոն «Դպրություն» հաղորդաշարի մի ողջ եթեր է նվիրել թեմային:
Տարվա ընթացքում այլ ԶԼՄ-ներում հրապարակումներ չեն եղել պայմանավորված մի քանի հանգամանքերով. համավարակով՝ հեռուստա և ռադիոընկերությունները մասնագետների չեն հյուրընկալել տնական ժամանակ:
Իսկ տպագիր մամուլում նյութերի բացակայությունը պայմանավորված է ՈԱԱԿ քաղաքականությամբ՝ խուսափել հեռախոսային հարցազրույցներից, որոնք կրթության ոլորտում մասնագիտացած լրագրողների բացակայության պայմաններում հաճախ թյուր կամ ոչ ամբողջական լուսաբանման պատճառ են դառնում:

Շփում կայքի միջոցով /ուղղորդող փաստաթղթեր, ուղեցույցեր, հարցազրույցներ/

Համավարակի մեկնարկից և առցանց ռեժիմով կրթության անցնելուց հետո ՈԱԱԿ-ի առջև շահակիցների հետ շփման նոր ձևաչափ ընտրելու անհրաժեշտություն առաջացավ: Շեշտադրվեց ՈԱԱԿ կայքը և ֆեյսբուքյան էջը: ՈԱԱԿ աշխատակազմի ամենօրյա աշխատաժողովները շահակիցներին ուղղված ուղերձների շեշտադրմամբ լուսաբանվել են թե կայքում, թե ֆեյսբուքյան էջում: Հաջորդել են կրթության որակի ապահովման առցանց քննարկումները շահակիցների հետ, որոնք նույնպես լուսաբանվել են վերը նշված հարթակներում: Շահակիցների հետ քննարկումների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում մշակվել և ՈԱԱԿ կայքում հրապարակվել են առցանց կրթության որակի ապահովմանը միտված ուղենիշներ՝ ըստ ոլորտների:
Ուղենիշները տարածվել են շահակիցների շրջանում նաև էլեկտրոնային փոստի միջոցով: Ավելին, հիմնադրամի կայքում հրապարակված այն նյութերը, որոնք իրազեկող, կառույցի քաղաքականությունը շեշտադրող բնույթ ունեն, նույնպես տարածվել են էլեկտրոնային փոստի միջոցով:
Հրապարակվել է նաև հարցազրույցների շարք ՈԱԱԿ մասնագետների հետ, որոնք ներկայացրել են Հիմնադրամի մոտեցումը առցանց կրթության որակի ապահովման վերաբերյալ և պարզաբանել կառույցի քաղաքականությունը և ակնկալիքները շահակիցներից առկա իրավիճակում:

Շահակիցների հետ հաղորդակցություն սոցիալական ցանցերի միջոցով /բուկլետներ/

Հաշվի առնելով ի հայտ եկած նոր մարտահրավերները՝ ՈԱԱԿ հասարակայնության հետ կապերի մասնագետը Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի մասնագետների, «Ուսանողության ձայն» նախագծի պատասխանատուների հետ դուրս է բերել շահակիցներին առավել շատ հուզող թեմաները, որից հետո համապատասխան խորհուրդներով էլեկտրոնային բուկլետներ են պատրաստվել և առցանց տարածվել:
Մասնավորապես, հրապարակվել են խորհրդատվական բուկլետներ հետևյալ թեմաներով.

- ինչպես կազմակերպել առցանց ուսուցումը համավարակի պայմաններում,

- ինչպես ապահովել ուսանողների ներգրավվածությունն առցանց դասերին,
- ինչպես դասավանդել դիմակով,
- որոնք են ուսուցանող գնահատման դրական կողմերը,
- ինչպես արդյունավետ ինքնավերլուծություն իրականացնել
- ինչպես ձևավորել որակի շարունակական բարելավման մշակույթ,
- խորհորդներ առցանց սովորող ուսանողներին,
- խորհուրդներ առաջին կուրսեցիներին։

Վիճակագրական տվյալներ

2020 թ. ՈԱԱԿ կայքում հրապարակվել է 89 լուր, 5 հարցազրույց, 8 հայտարարություն, 8 ուղղորդող փաստաթուղթ։ Հրապարակվել են նաև Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները, համապատասխանաբար թարմացվել է նաև Գրանցամատյանը։

Հաշվետու տարվա ընթացքում, համաձայն Google analytics համակարգի տվյալների, ՈԱԱԿ կայքն ունեցել է 22 877 այցելություն և 70 395 էջադիտում։

Կայքի բովանդակության առումով, ինչպես և նախորդ տարիներին, ամենադիտված էջերն են Հավատարմագրում և փորձագետներ բաժինները, ինչպես նաև Հավատարմագրման պետական գրանցամատյանը։

Հաշվետու տարում ՈԱԱԿ ֆեյսբուքյան էջում կատարվել է 228 գրառում։ Էջի հետևորդների թիվն ավելացել է 648-ով՝ հասնելով 4195-ի։

III. ՈԱԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Արտաքին և ներքին գործընթացների արդյունավետության գնահատում

Որակի ներքին ապահովման քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով ՈԱԱԿ-ն իր որակի ապահովման գործընթացները համակարգում է 11 տիրույթով /առաջնորդություն, մարդկային ռեսուրսների կառավարում, հավատարմագրման հանձնաժողով, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրում, որակի ներքին ապահովում, միջազգային կապեր, հաղորդակցություն և հանրային կապեր, իրավական գործընթացներ, քարտուղարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռեսուրսների կառավարում/: Որակի ներքին ապահովման գործընթացները կառավարելու համար մշակված են պրոտոկոլներ, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր տիրույթի նպատակները, գործողությունների ծրագրերը, գնահատման ցուցիչները և որակի ապահովման գործիքները:

2020 թվականի մարտ ամսից սկսած մոտ յոթ ամիս ՈԱԱԿ-ը, պայմանավորված համավարակով իրականացրել է իր գործընթացները առցանց տարբերակով: Վեբինարների անցկացման նպատակով ձեռք բերված ZOOM հարթակը կիրառվել է ՈԱԱԿ-ի ամենօրյա քննարկումների, անձնակազմի հավաքաների համար:

ՈԱԱԿ-ը, որակի ապահովման յուրաքանչյուր տիրույթի որակի ապահովման համար շարունակել է իրականացնել անձնակազմի ամենօրյա հանդիպումներ, որտեղ քննարկվել են ինչպես համավարակով պայամանվորված խնդիրների լուծման ուղիները, հավատարմագրման գործընթացների հետաձգման և այլընտրանքային ձևերի մշակման աշխատանքները, այնպես էլ ՈԱԱԿ-ի գործունեության ընթացիկ հարցերը և խնդիրները, հանդիպումներ են տեղի ունեցել ներքին և արտաքին շահակիցների հետ /ՈԱԱԿ-ի կառավարման խորհուրդ, հավատարմագրման հանձնաժողով, փորձագետներ, ուսանողներ, բուհերի կառավարման օղակների ներկայացուցիչներ, վարչական կազմի ներկայացուցիչներ, ամբիոնների վարիչներ, դասախոսներ/, քննարկելու առկա մարտահրավերները:

ՈԱԱԿ-ը շարեւնակել է իրականացնել հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ գնահատելու հավատարմագրման գործընթացների արդյունավետությունը ՄՈՒՀ-երի, փորձագետների և համակարգողների շրջանում, այդ թվում առցանց տարբերակով հավատարմագրման կազմակերպման առանձնահատկությունները գնահատելու և խնդիրները դուրս բերելու նպատակով:

2020 թթ.-ին ՈԱԱԿ-ն իրականացրել է ներքին գնահատում՝ դուրս բերելու ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման բոլոր ոլորտների ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև բարելավմանն ողղված առաջարկությունների դուրս բերման համար:

Պարբերաբար հավաքագրվել և հավաքագրվում են տվյալներ և առաջընթացի ցուցանիշներ՝ համաձայն Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների:

Իրականացվել են նաև ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը, ինչպես նաև հավատարմագրման գործընթացների ազդեցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա:

Կատարված ուսումնասիրությունների և հանդիպումների արդյունքում ՈԱԱԿ-ը պարբերաբար իրականացնում է փաստաթղթային հենքի բարելավումներ:

Հավատարմագրման գործընթացների վերլուծություն

2020 թվականին իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների իրականացման որակը գնահատելու, մասնակից շահակիցների արձագանքը հավաքագրելու նպատակով ՈԱԱԿ-ն իրականացրել է հավատարմագրման գործընթաց անցած բուհերի և քոլեջների գործընթացի գնահատման վերլուծություն:

Ուսումնասիրությունն իրականացվում է անանուն հարցման միջոցով ՄՈՒՀ-երի, փորձագետների, համակարգողների շրջանակներում, որին հաջորդում են խմբային քննարկումները: Գործընթացների արդյունավետության գնահատումն իրականացվում է ըստ փուլերի.

1. ինքնավերլուծություն,
2. նախնական գնահատման գործընթաց,
3. փորձագիտական այց,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին /օրնեսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ուղենիշներ, ձևաչափեր և այլն/: Բոլոր փորձագետները համարում են, որ տրամադրված փաստաթղթեր բավարար են արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար:

Գնահատվել է նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (90%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (96%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (89%):

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը: Արդյունքները ցույց են տալիս նաև, որ փորձագետները կարողացել են առցնաց եղանակով ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամանակ արդյունավետ նախնական գնահատում իրականացնել, կատարել դասալսումներ և փաստաթղթերի դիտարկումներ:

Գնահատվել է նաև, թե ուսումնական հաստատություն կատարվող այցի ժամանակ որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանյունից (85%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (80%): Անդրադարձ է կատավել նաև հանդիպումների օպտիմալ

տևողությանը (45-60 րոպե): Հիմնականում նշվել է, որ առցանց հանդիպումները խնդիրներ են առաջացրել ռեսուրսները դիտարկելու տեսակետից, բայց միևնույն ժամանակ մասնագիտական հանդիպումները՝ ըստ կրթական ծրագրերի առավել շատ հնարավորություն են տվել պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ:

Գնահատվել է նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությունը: Հարցման մասնակիցների 88%-ը բավարարված է փորձագիտական խմբի զեկուցի ձևաչափով և բովանդակությամբ:

Ինչպես նաև անդրադարձ է կատարվել ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած փորձագետների վերապատրաստմանը: Փորձագետների մեծամասամբ նշում են, որ տվյալ վերապատրատումները հնարավորություն են տալիս իրենց առավել լայն պատկերացում կազմել փորձագիտական աշխատանքի վերաբերյալ:

Մարդկային ռեսուրսների կառավարում

2020թ. շուրջ 10 տարի ընդմիջումից հետո կատարվեց ՈԱԱԿ-ի հաստիքացուցակի փոփոխություն՝ հաստիքաների ավելացումով՝3 հաստիք: Վերանայվեց աշխատողների աշխատավարձերը 10-15%-ով, որը իհարկե իրականում աշխատավարձի բարձրացման մեծ տոկոս չէ, այնուամենայնիվ իր խթանիչ դերն է խաղում մոտիվացիայի բարձրացման համար, վերապատրաստումների և զարգացման ծրագերի կողքին: Ավելին նախատեսվում էր 2021թ. նույնպես բարձրացնել աշխատավարձերը, սակայն համավարակով և պատերազմով պայմանավորված ՈԱԱԿ-ի ֆինանսական ռեսուրսները, այդ թվում պետության ֆիանսավորումը փոփոխության չենթարկվեցին: Չնայաց 3 հաստիքով հաստիքացուցակի ավելացումը դեռ բավարար չէ ՈԱԱԿ կանոնադրական նպատակաները առանց գերծանրաբեռնված իրականացնելու, ուստի այս առումով նախատեսվում էր 2021թ.-ին նույնպես հաստիքացուցակի փոփոխություններ կատարել, ավելացնելով նաև հաստիքաների քանակը՝դարձնելով շուրջ 30 հաստիք: 2021թ. նախատեսվում է փոփոխություններ կատարել հաստիքացուցակի, ինչպես կառուցվածքային-բովանդակային, այնպես էլ քանակական՝ նպատակ ունենալով ռազմավարական նոր մարտահրավերներին և երկրում տեղի ունեցող փոփոխություններին դիմակայելու համար: 2021թ. նախատեսվում է մշակել նոր հաստիքացուցակ՝ աշխատավարձերի բարձրացումով, որոնք կյանքի կկոչվեն արդեն 2022թ-ին:

Ստորև ներկայացվում է ՈԱԱԿ հաստիքացուցակը՝ ըստ պաշտոնների:

ՈԱԱԿ անձնակազմ	Հաստիքներ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5
5. Վարչական և օժանդակ կազմ	12
Ընդամենը	25

Աղյուսակ 3

2020 թվականը կադրերի հոսունության մասով՝ համալրում կամ աշատանքից ազատում, փոփոխություն չի կրել: Եղել են աշխատանքային պայմանների էական փոփոխություններ՝ պաշտոնի և աշխատավարձերի բարձարցումներ: 2 աշխատողի պաշտոնի բարձրացում է եղել: Աշխատողների 95%-ի աշտավարձերը բարձրացել են: Այնուամենայնիվ, կադրերի ներգրավումը ՈԱԱԿ աշխատակազմ դեռևս մնում է հիմնախնդիր՝ պայմանավորված ոչ գրավիչ աշխատավարձով: ՈԱԱԿ-ը դեևս հիմնախնդիր մնացած հարցի մասով մեծ հուսեր ունի կարգավորել այն 2022թ.-ին՝ ֆիանսնական հոսքերի դիֆերսիֆիկացիայի և նոր աղբյուներ գտնելու միջոցով:

Մարդկային ռեսուրսների կառավարման և կանոնադրական գլխավոր նպատակը՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը արդյունավետորեն, արհեստավարժ կազմակերպելու և իրականացվնելու համար ՈԱԱԿ-ը կարևորվում է անհրաժեշտ քանակի պատրաստված համակարգողներ ունենալը: 2020թ. առանձնացել է նրանով, որ համավարակի պայմաններում հավատարմագրման գործընթացներն իրականացվել են բացառապես առցանց եղանակով, որին արդեն պատրաստված են եղել ՈԱԱԿ համակարգողները և իրենց փորձով կիսվել են նաև հավատարմագրման գործընթացների փորձագետների հետ՝ավելին այդ ուղղությամբ կազմակերպվել են վերապատրաստումներ ինչպես փորձագետների, այնպես էլ ուսումնական հաստատությունների համար: Չնայած համավարակին ՈԱԱԿ-ի ուշադրությունից երբեք չի վրիպում կադրերի շարունակական վերապատրաստումները և անհատական ինքնակատարելագործումը: Նույնիսկ համավարակի պայմաններում ՈԱԱԿ աշխատակիցները մասնակցել են միջազգային առցանց վերապատրաստումների՝ կազմակերպված Եվրոպական Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Ասոցիացիայի (ENQA) և Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) կողմից: ՈԱԱԿ-ի աշխատակազմը նաև մասնակցել է միջազգային որակի ապահովման կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին և վեբինարներին:

Մարդակային ռեսուրսների արդյունքային կառավարման և կարիքների բացահայտման տեսանկյունից ՈԱԱԿ-ը 2020թ. իրականացրել է հարցում աշխատողների շրջանում: Հարցման արդյունքում դուրս են բերվել ՈԱԱԿ-ի բոլոր ոլորտների /հավատարմագրման գործընթացներ, կառավարում. մարդկային ռեսուրսների կառավարում, ֆինանսական կառավորում և այլն/ թույլ և ուժեղ կողմերը և առաջարկություններ բարելավման համար: Իրականացված հարցման արդյունքում ՈԱԱԿ-ի աշխատակազմի մեծ մասը որպես ուժեղ կողմ նշել է աշխատանքային միջավայրը /ռեսուրսներ, ինտերնետ հասանելիություն և այլն/, ղեկավար կազմի կողմից տրվող անընդհատ ուղղորդումը, մասնագիտական զարգացման համար մեծ հնարավորությունները, տարբեր բաժիններում պրոֆեսիոնալ և պատրաստված աշխատակազմը: Որպես թույլ կողմ ՈԱԱԿ-ի աշխատակազմը մատնանշել են առցանց տարբերակով աշխատանքի դժվարությունները, անձնակազմի համալրման դժվարությունները:

Առ 2020թ. ՈԱԱԿ մարդկային ռեսուրսների համալրման հիմնական աղբյուրները «Ուսանողության Ձայն» նախագծում ներգրավված ակտիվություն ցուցաբերած ուսանողներն են, «Կրթության կառավարում» մասնագիտությամբ շրջանավարտները, ինչպես նաև հավատարմագրման գործընթացում ներգրավված փորձագետներ: Սակայն 2021թ. սկսած նոր ռազմավարական նպատակներին և մարտահրավեներին առավել արդյունավետ դիմակայելու համարա ՈԱԱԿ-ը որոշ փոփոխություններ է իրականացնելու նաև մարդկային ռեսուրսների համալրման քաղաքականության մեջ՝ ներգրավելով նաև տեխնիկական, բնական և հասարակական գիտությունների մասնագետների՝մարդկային կապիտալը դիվերսիֆիկացնելու նպատակով, թիրախում միանշանակորեն պահելով կրթության կառավարման մասնագետներին:

2020թ. չնայած առցանց և հեռավար եղանակների, այնուամենայնիվ առավել ինտենսիվորեն տեղի էր ունենում աշխատակազմի պարբերաբար հանդիպումներ, հանդիպումների միջոցով աշխատակիցների գիտելիքների և փորձի փոխանակումներ, որը կարելի նշել, որ ՈԱԱԿ-ում մարդկային ռեսուրսների համագործակցության, փոխօգնության ձավորված լավագույն մշակույթ է: Մարդկային ռեսուրսների արդյունավետ աշխատանքի իրականացման համար ՈԱԱԿ-ն ապահովված է բավարար ռեսուրսներով, այդ թվում տեխնիկական: 2020թ.-ին ՈԱԱԿ-ի աշխատակազմը շարունակել է կիրառել Office 365 բոլոր ֆունկցիաները, այդ թվում առցանց հանդիպումներ կազմակերպելու, փաստաթղթերի բազաներ ստեղծելու հնարավորությունները:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը գնեց նաև zoom հարթակից օգտվելու թույտվության ամբողջական փաթեթ, որը շարունակվում է առ այսօր և այն կդառնա հետագայում նաև ՈԱԱԿ առկա, հեռավար՝ հիբրիդային, գործունեության անբաժանելի մաս:

ՈԱԱԿ ֆինանսական քաղաքականությունը և անկախությունը

Կազմակերպության լոկոմոտիվը ֆիանանսական և որակյալ մարդկային ռեսուրսներն են: Լինելով պետական, բայց միաժամանակ, անկախ հիմնադրամ ՈԱԱԿ-ն իր ֆինանսական կայունությունն ու անկախությունն ապահովելու նպատակով մշակել է ֆինանսների դիվերսիֆիկացման քաղաքականություն, որը համավարակով և պատերազմառվ պայմանավորված հնարավոր չեղավ վերանայելու 2020թ., սակայն 2021-2022 թվականներին նախատեսվում է այն կյանքի կոչել աստիճանաբար՝ հաշվի առնելով համավարակի և պատերազմի ծանր տնտեսական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում:

ՈԱԱԿ ֆինասնական քաղաքականությունը և Կանոնադրությունը սահմանում են այն ուղղությունները, որոնցով գոյանում են ՈԱԱԿ ֆինանսական հոսքերը.

1. բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման միջոցառումների պետական ֆինանսավորում՝ որպես պետական հիմնադրամ,
2. ձեռնարկատիրական գործունեությունց ստացվող եկամուտներ՝ հավատարմագրումներ, վերապատրաստումներ,
3. միջազգային դրամաշնորհային ծրագրերից եկող ֆինանսական հոսքեր:

Վերոնշյալները այն հիմնական ֆինանսական հոսքերն են, որ 2020թ.-ի ընթացքում մուտք են արվել ՈԱԱԿ-ի բյուջե:

Նախորդ տարվա համեմատ պետությունից ստացվող ֆիանսական միջոցները 2020թ.-ում ավելացել են՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրումը պետական ֆիանանսներով իրականացնելով պայմանավորված:

Վերապատրաստումների մասով ֆինանսական հոսքերը շեշտակի նվազել են՝ համավարակով և պատերազմով պայմանավորված: 2020թ. անցկացվել է մեկ վճարովի վերապատրաստում ուսումնական հաստատությունների համար:

2019թ.-ին մշակվել է ՈԱԱԿ-ի գործառությունների արդյունքային, օպտիմալ և որակյալ կազմակերպելու և իրականացնելու համար ծրագրային կառավարման և ֆինանսավորման մեխանիզմներ, որը չի իրականացվել 2020թ.-ի ընթացքում հայտնի պատճառներով, այն նախատեսվում է վերանայել և կյանքի կոչել 2021թ. երկրորդ կիսամյակից: Ֆինանսավորման այս մեխանիզմը ենթադրում է ՈԱԱԿ ծրագրային ուղղություններով ֆինանսների հատկացում՝ ըստ հստակ վերջնարդյունքների:

Ստորև ներկայացված է ՈԱԱԿ ֆինանսական հոսքերը՝ վերևում նշված ուղղություններով.

ՈԱԱԿ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԴԻՎԵՏԻՖԻԿԱՑԻԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԴՐԱՄԱՆԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐՈՎ 2009-2020ԹԹ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐՀՈՍՔԵՐ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
	Մասնաբաժին (%)											
Պետական ֆինանսավորումից	97.80	95.90	93.50	88.50	84.70	68.10	48.50	56.60	52.20	59.80	41.20	64.78
Հավատարմագրումներից	2.20	0.70	1.00	6.50	5.40	1.40	35.50	15.20	19.50	27.80	43.10	30.00
Վերապատրաստումներից	-	3.40	3.80	-	-	2.10	0.60	2.50	1.95	1.60	8.50	0.38
Միջազգային համագործակցությունից	-	-	1.70	2.40	9.70	28.40	15.40	25.70	24.40	6.80	6.20	3.15
Այլ աղբյուրներից	-	-	-	2.60	0.20	-	-	-	1.95	4.00	1.00	1.68

Աղյուսակ 5



2. ՈԱԱԿ-ի գործունեության արտաքին գանահտման գործընթացներ

ՈԱԱԿ-ը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ է սկսած 2017 թվականից: ՈԱԱԿ-ը ENQA-ի կողմից հավատարմագրում ստանալուց երկու տարի անց՝ ըստ նախատեսված ժամանակահատվածի, ներկայացրել է միջանկյալ առաջընթացի զեկույց: Հաջորդիվ տեղի է ունեցել ENQA-ի փորձագետների այց ՈԱԱԿ միջանկյալ առաջընթացի մշտադիտրակման նպատակով: Զեկուցի և այցի արդյունքում Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) Կառավարման խորհրդի նիստում արձանագրվել է, որ ENQA-ին անդամակցությունից ի վեր ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել զգալի առաջընթաց՝ համաձայն ՈԱԱԿ-ի բարելավման պլանի:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը շարունակել է իր բարելավման պլանով նախատեսված գործողությունների իրականացումը, միևնույն ժամանակ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելով ՈԱԱԿ-ի ինքնավերլուծության համար: Կազմվել է ժամանակացույց և մեկնարկել է հանդիպումները շահակիցների հետ:

2021 թվականին ՈԱԱԿ-ը կրկին դիմելու է ENQA-ին վերահավատարմագրման նպատակով: 2021թ. հոկտեմբեր ամսին ENQA է ուղարկվելու ՈԱԱԿ ինքնավերլուծության զեկույցը, իսկ արդեն 2022թ. նախատեսվում է ENQA փորձագետների այցը ՈԱԱԿ:

3. Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացների արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա՝ վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

Հաշվետու տարում բարելավվել է.

- Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը ամբողջությամբ,
- փորձագետների վերապատրաստումների փաթեթը,

- ՄՈՒՀ-երի համար իրականացվող վերապատրաստումների փաթեթը,
- համակարգողի փաթեթի փաստաթղթերի փաթեթը,
- թարգմանիչներին տրվող փաթեթը,
- մշակվել է պետական հավատարմագրման նոր կարգի նախագիծ, որի մշակումները շարունակվելու են նաև 2021թ.՝ համահնչեցնելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի պահանջներին,
- մեկնարկել է փորձաքննության անցկացման ձեռնարկի աշխատանքները, որի վերամշակումները շարունակվելու են նաև 2021թ.,
- առաջին անգամ մշակվել են մշտադիտարկումների կազմակերպման և անցկացման կարգը և դրան կից ձևաչափերը, առացանց եղանակով հավատարմագրումների իրականացնելու առանձնահատկությունները, որոնք սակայն 2021թ. ընդգրկվելու են նոր հավատարմագրման կարգում և փորձաքննությունների անցկացման ձեռնարկներում,
- 2020թ. վերջնականացվել է <<համակարգողի քայլերը հավատարմագրման գործընթացում>> փաստաթուղթը,
- մշակվել է ՈԱԱԿ-ի նոր գրանցամատյանը, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն բուհերի և քոլեջների ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների վերաբերյալ: Նոր մշակված գրանցամատյանի առանձնահատկություններից մեկը նա է, որ այն կապված է Եվրոպական փորձագիտական զեկույցների բազային: ՈԱԱԿ-ի նոր գրանցամատյանը մշակվել է Էրազմուս+ DEQAR CONNECT ծրագրի շրջանակենրում: Նախատեսվում է փորձարկել մշակված ծրագիրը 2021 թվականին:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը շարունակել է համագործակցությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առաջարկություններ ներկայացնելու մասով:

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը մեկնարկել է 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագրի առաջընթացի վերլուծության և 2021-2025 թթ Ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը հանդիպումներ է ունեցել իր շահակիցների հետ՝ բուհերի ղեկավար կազմի, որակի ապահովման կենտրոնների, փորձագետների, ուսանողների, Հավատարմագրման հանձնաժողովի և Հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչների, ինչպես նաև ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ: Հանդիպումների ընթացքում նախանշվել են ՈԱԱԿ-ի առաջիկա հինգ տարիների զարգացման ուղիները, վերլուծվել է նախորդ ռազմավարական ծրագրի առաջընթացը: ՈԱԱԿ-ի առաջիկա զարգացման ուղիները քննարկվել են ՈԱԱԿ-ի աշխատանքերում ներգրավված միջազգային փորձագետի հետ, որի արդյունքում պատրաստվել է 2021-2025 թթ. Ռազմավարական ծրագրի նախագիծը, որը քննարկվել է ՈԱԱԿ-ի Հոգաբարձուների Խորհրդի կողմից:

IV. ՈԱԱԿ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

1. Միջազգային ճանաչում ապահովող կառույցներին անդամակցություն

2017 թվականին Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ դառնալուց և Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցվելուց ի վեր ՈԱԱԿ-ը ակտիվորեն ներգրավված է ENQA-ի և EQAR-ի կողմից կազմակերպված միջացառումներին՝ ներկայացնելով որակի ապահովման ոլորտում առկա մարտահրավերն ու հաջողված փորձը:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը, ներկայացված լինելով ENQA-ի կառավարման խորհրդում մշտապես մասնակցել է կառավարման խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև կազմակերպված վեբինարներին: Վեբինարներն ու միջոցառումները նվիրված են եղել համավարակով պայմանավորված իրավիճակում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման մարտահրավերներն ու տարբեր կազմակերպությունների փորձառությանը:

ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) ընդհանուր վեհաժողովին: 2020թ.-ին վեհաժողովը տեղի է ունեցել առցանց միջավայրում:

Վեհաժողովի ընթացքում հաստատվել է ENQA ռազմավարությունը 2021-2025թթ. համար: Փաստաթղթի նախնական տարբերակը քննարկվել և լրամշակվել էր 2019-ի հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած վեհաժողովի ընթացքում:

2011 թվականից ՈԱԱԿ-ն անդամակցում է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցին (INQAAHE) և ներկայացված է կառավարման խորհրդում, 2016թ. ՈԱԱԿ-ը ԱՄՆ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի Որակի միջազգային խմբի (CIQG) անդամ է, 2017թ. նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ:

ՈԱԱԿ-ն ակտիվ մասանակցություն է ցուցաբերել ցանցերի կողմից կազմակերպվող միջոցառումներին և հանդես է եկել տարբեր զեկուցումներում և քննարկումներում: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցե է Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE) «Որակ, կարողություններ և կրթական վերջնարդյունքներ. ինչպես ապահովել Z սերնդի աշխատունակությունը» խորագրով 12-րդ ֆորումին: Առցանց ֆորումի առանցքային թեմաներն էին Z սերնդի (1996-2015թթ. ծնվածներ) կարողությունների ձևավորումը որակի ապահովման և որակավորումների ճանաչման նորարարական մոտեցումների միջոցով և Z սերնդի աշխատունակության բարձրացումը, ինչպես նաև համավարակով պայմանավորված մարտահրավերները և դրա ազդեցությունը որակ արտաքին և ներքին ապահովման գործընթացների վրա:

Ֆորումի շրջանակներում զեկույցով հանդես եկավ նաև ՈԱԱԿ տնօրենը՝ ներկայացնելով Արևելյան Եվրոպայում որակի ապահովման համակարգը, առկա մարտահրավերները և զարգացման ուղիները:

ՈԱԱԿ-ի աշխատակազմը մասնակցել է գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող մի շարք վեբինարների և միջոցառումների /Ֆինալանդիա, Լեհաստան, Բելգիա, Ղազախստան և այլն/:

2020թ.-ին տեղի է ունեցել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի նախարարական առցանց գագաթնաժողովը, որը կրում էր «Մարտահրավերներին ընդառաջ. ստեղծելով նոր հնարավորություններ և չեղարկելով տարբերությունները» խորագիրը: Այն հյուրընկալել էր Բոլոնիայի գործընթացի Իտալիայի քարտուղարությունը:

Գագաթնաժողովին որպես ENQA անդամ մասնակցեց նաև ՈԱԱԿ-ը:

Գագաթաժողովի ընթացքում կարևորվել է, որ ազգային մակարդակում կիրառվող կարգավորումներն ապահովեն հավատարմագրման գործակալությունների անկախ, ճկուն և թափանցիկ գործունեությունը, նպաստեն ուսանողների ակտիվ ներգրավվածությանը որակի ապահովման գործընթացներում:

Նախարարական գագաթնաժողովի շրջանակներում ընդունվել է Հռոմի նախարարական կոմյունիկեն, որը կանխորոշում է ԵԲԿՏ անդամների առաջիկա 10 տարիների գործունեությունը, ակադեմիական ազատությունների մասին հայտարարությունը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության բարելավմանը կոչված առաջարկություններ՝ ուղղված ազգային իշխանություններին:

ՈԱԱԿ-ը մասնակցել է նաև Վերապատրաստումների եվրոպական հիմնադրամի (ETF) որակի ապահովման ֆորումին: Միջազգային ֆորումի շրջանակներում անդրադարձ է կատարվել միջին մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման խնդիրներին, ներկայացվել է ֆորումի անդամ երկրների լավագույն փորձը: Ֆորումը ստեղծվել է 2017-ին: Սկզբնապես նախաձեռնությանը միացել են Բալկանյան երկրները, Թուրքիան, Հարավային և Արևելյան Միջերկրածովյան երկրները: 2021-ին ֆորումին միանալու են նաև Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան:

2. Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խումբ

2019թ.-ից ՈԱԱԿ-ն ընդգրկվել է Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբում (Bologna Peer Support Group on QA), որը նպատակ ունի նպաստելու անդամ երկրների լավագույն փորձի տարածմանը ողջ եվրոպական կրթական տարածքում: 2020թ.-ին Բելգիայում տեղի ունեցած Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային խմբի երրորդ հանդիպմանը մասնակցել է նաև ՈԱԱԿ-ը: Աշխատաժողովը հնարավորություն տվեց ամփոփելու Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային խմբի գործունեությունը՝ շեշտադրելով արձանագրված ձեռքբերումները:

Խմբի շրջանակներում ձևավորված համագործակցությունների արդյունքում նախատեսված էր իրականացնել փորձի փոխանակման նպատակով իրականացվող շարժունության 4 ծրագիր: Հաշվետու տարում նախատեսված էին հետևյալ ծրագրերը. ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումների համատեղման և

անդրսահմանային որակի ապահովման հաջողված փորձն ուսումնասիրելու նպատակով ՈԱԱԿ մասնագետները պետք է այցելեին Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպություն (NVAO), Ֆրանսիայի Ինժեներական մասնագիտությունների խորհուրդ (CTI) և Հետազոտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհուրդ (HCERES), Հավատարմագրման և որակի ապահովման շվեյցարական գործակալություն (AAQ) և Շոտլանդիայի Որակի ապահովման գործակալություն (QAA Scotland)։

Իսկ ՈԱԱԿ-ի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում որակի ապահովման եվրոպական չափանիշներին (ESG) համապատասխան որակի ապահովման համակարգի ստեղծման և ինստիտուցիոնալ հավատարմագրումների փորձին ծանոթանալու համար Հայաստան պետք է ժամանեին Մոլդովայի Կրթության և հետազոտության որակի ապահովման ազգային գործակալության մասնագետները։

Այդուհանդերձ, նախատեսված այցելությունները հետաձգվեցին՝ պայմանավորված COVID-19 համավարակով առաջացած տեղաշարժման բարդություններով։

Թեև անձնակազմի փոխանակման ծրագրերը հետաձգվեցին, այնուամենայնիվ Բոլոնյան գործընթացի որակի ապահովման գործընկերային աջակցության խմբի կողմից կազմակերպվել են քննարկումներ և վեբինարներ։ Մասնավորապես քննակվել է որակի ապահովման գործընթացներում շահակիցների արդյունավետ ներգրավման մեխանիզմները, որտեղ ՈԱԱԿ-ը կիսվել է իր փորձով ուսանողներին և գործատուների ներգրավման մեխանիզմների հետ կապած։

3. Միջազգային ծրագրեր

ԵՄ ֆինանսավորմամբ «EuniQ» ծրագիր

2019 թվականից սկսած ՈԱԱԿ-ը որպես գործընկեր ընդգրկվել է EUniQ (Եվրոպական մոտեցման մշակում եվրոպական համալսարանների ցանցի համապարփակ որակի ապահովման համար) ծրագրում։ «EuniQ» ծրագրի համակարգողը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալությունն (NVAO) է։ ՈԱԱԿ-ն ընգրկվել է ծրագրում որպես կառույց, որը հաջողությամբ կիրառել է Եվրոպական մոտեցումները երկրում որակի ապահովման համակարգի մշակման և ներդրման համար։ «EUniQ» ծրագրի նպատակն է ճանապարհային քարտեզ ապահովել որակի ապահովման գործակալությունների համար, որպեսզի նրանք, հաշվի առնելով եվրոպական համալսարանների ցանցերի առանձնահատկությունները, տրանսազգային կրթությունը և համատեղ հավատարմագրումները, միասին որակի ապահովման համակարգի գնահատման այնպիսի մեթոդաբանություն մշակեն, որը կիրառելի կլինի բոլոր երկրների համար։

Ծրագրի շրջանակներում մշակված մեթոդաբանությունը փորձարկվել է 3-4 արտաքին գնահատումների միջոցով, որոնք իրականացրել են գործընկեր հավատարմագրման գործակալությունները։

Որպես ձևավորված և փորձառություն ունեցող եվրոպական կառույց՝ ՈԱԱԿ-ը իրականացրել է արտաքին գնատում շվեդական Բարձրագույն կրթության հավատարմագրման կառույցի հետ (UKÄ) համատեղ համակարգելով արտաքին գնահատման գործընթաց Նորարարության, տեխնոլոգիաների և ինժեներիայի ոլորտի եվրոպական համալսարանների ցանցում, որում ընդգրկված են համալսարաններ Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Իտալիայից, Գերմանիայից, Պորտուգալիայից և Իսպանիայից: Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը և Շվեդական կազմակերպությունը կազմել են միջազգային փորձագիտական խումբ, նախնական գնահատում են իրականացրել ուսումնասիրելով եվրոպական ցանցի փաստաթղթերը և կազմվել է օրակարգ փորձագիտական առցանց այցի համար:

Հաշվետու տարվա հոկտեմբեր ամսին տեղի է ունեցել առցանց այց, որի ժամանակ հանդիպումներ են տեղի ունեցել ցանցի բոլոր համալսարանների ուսանողների, դասախոսների, կառավարման խորհուրդների և կրթական ծրագրերի պատասխանատուների հետ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցի արդյունքների վերլուծության արդյունքում պատրաստվել է զեկույց և քննարկվել է ծրագրի շրջանակներում:
Նախատեսվում է ծրագրի ամփոփիչ համաժողով և արդյունքների ամոփոում 2021 թվականին:

ԵՄ «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագիր

Հաշվետու տարում ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակներում տեղի ունեցան 4 գյուղատնտեսական՝ Վանաձորի պետական գյուղատնտեսական, Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական, Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական և Գավառի ակադեմիկոս Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջների հավատարմագրման գործընթացները: Հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով այս քոլեջների աշխատակիցները վերապատրաստվել են ՈԱԱԿ-ում, ապա ՈԱԱԿ-ի հետ համագործակցությամբ իրենց ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգ են ներդրել՝ աստիճանաբար նախապատրաստվելով ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Քոլեջների աշխատակիցների համար ծրագրի շրջանակներում դասընթաց է իրականացրել նաև Բուլղարիայից ժամանած մասնագետ Պատրիցիա Գեորգիևան: Գյուղատնտեսական քոլեջներում արտաքին գնահատում իրականացնող փորձագիտական խմբերում ընդգրկվել են մեկական միջազգային, երեքական հայաստանյան փորձագետներ և մեկական ուսանող-փորձագետ:

Ծրագրի արդյունքների ամփոփման համար ՈԱԱԿ-ը պատրաստել է զեկույց և ներկայացրել ծրագրի պատասխանատուներին և հհ ԿԳՄՄՆ-ին:

Էրազմուս + DEQAR CONNECT ծրագիր

2020 թվականին ՈԱԱԿ-ը ներգրավվել է Էրազմուս + DEQAR CONNECT ծրագրում: Ծրագիրը համակարգում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանը (EQAR): Էրազմուս + DEQAR CONNECT ծրագրի նպատակն է խրախուսել կրթության որակի ապահովումը և ճանաչումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

DEQAR CONNECT ծրագիրը կոչված է ընդլայնել արտաքին գնահատման փորձագիտական զեկույցների բազան (DEQAR) և ստեղծել միասնական շտեմարան՝ միավորելով գործընկեր բոլոր հավատարմագրման գործակալությունների բազաները, ինչպես նաև խրախուսել DEQAR-ի տվյալների օգտագործումը ճանաչման գործընթացում:

ՈԱԱԿ-ը DEQAR CONNECT ծրագրի թիմի երկու մասնագետների ուղղորդմամբ մշակել է հավատարմագրման գրանցամատյանը, որը փորձարկվել է հաշվետու տարվա վերջին: 2021 թվականին նախատեսվում է ամբողջությամբ գործարկել և հասանելի դարձնել շահակիցներին:

2. Տարածաշրջանային համագործակցություն

Հաշվետու տարվա ընթացքում ՈԱԱԿ-ը շարունակել է սերտ համագործակցությունը տարածաշրջանի հավատարմագրման գործակալություններ հետ: Մասնավորապես քննարկումներ են իրականացվել Ռուսաստանի և Ղազախստանի հավատարմագրման գործակալությունների հետ համատեղ հավատարմագրումների և փորձագետների փոխանակումների շուրջ: Փորձի փոխանակում է տեղի ունեցել նաև համավարակով պայմանավորված իրավիճակում մարտահրավերների և որակի ապահովման գործընթացների կազմակերպման շուրջ:

Կարևորելով տարբեր համալսարանների հետ համագործակցությունը, ՈԱԱԿ-ը նախաձեռնել է վեբինարների շարք, որը նպատակ ուներ տարբեր թեմաների շուրջ միջազգային գործընկերների փորձի ներկայացմանը: Այսպես հաշվետու տարվա ընթացքում, տեղի է ունեցել առցանց դասընթաց/վեբինար՝ «Ուսուցման և ուսումնառության արդյունավետ մեթոդներ» թեմայով:

Դասընթացավարներն էին ԵԽ փորձագետ, Կրթության և վերապատրաստումների գնահատման խորհրդի (ETEC) և Համաշխարհային բանկի խորհրդատու, Evidence ինստիտուտի հետազոտության գծով տնօրեն, Վարշավայի համալսարանի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Թոմաս Գաջերովիչը և Կրթության և վերապատրաստումների գնահատման խորհրդի (ETEC) միջազգային գնահատումների փորձագետ, Համաշխարհային բանկի, Եվրոպական խորհրդի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի,

ՅՈՒՆԵՍԿՕ-ի խորհրդական, Evidence ինստիտուտի հիմնադիր, Վարշավայի համալսարանի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Մաչեյ Զաբուկովսին:

Դասընթացին մասնակցում էին մասնագետներ հայաստանյան բուհերից և քոլեջներից:

Լեհ մասնագետները դասընթացի մասնակիցներին ներկայացրեցին ուսուցման և ուսումնառության մեթոդների արդյունավետության հետազոտությունների իրենց փորձը, այնուհետև ներկայացրեցին իրենց հետազոտությունների արդյունքներն այն մասին, թե ինչպես է տեղի ունենում նորի յուրացումը, ինչպես է աշխատում հիշողությունը, ինչպես դասախոսը կարող է հասկանալ, թե մատուցված նյութից ինչն է ուսանողը հասկացել, որ մասն է սխալ հասկացել և ինչն է, որ կարող է մոռանալ, ուսանողի մնացորդային գիտելիքները ստուգելու ինչ արդյունավետ մեթոդներ կան և այլն: Ի թիվս մի շարք թեմաների, անդրադարձ կատարվեց նաև ուսուցանող գնահատմանը. ինչպես գնահատմամբ մոտիվացնել ուսանողին և ստանալ հետադարձ կապ դասընթացի արդյունավետության մասին:

Նախատեսվում է շարունակել վեբինարների շարքը 2021 թվականին:

V. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

2020 թվականը մարտահրավերներով լի էր ինչպես ամբողջ աշխարհի այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար: 2020 թվականին շահակիցների հետ կատարված քննարկումների, տարբեր միջոցառումների և վեբինարների արդյունքում քննարկվել են այն մարտահրավերները, որոնք առաջիկա տարում կշարունակեն լինել ՈԱԱԿ-ի գործունեության առանցքում: Կարևոր մարտահրավերներն են.

- բարձրագույն կրթության ոլորտի նոր մեխանիզմների և համակարգերի ներմուծումը՝ բարձրագույն կրթության և գիտության նոր օրենքի ներդրմամբ,
- միջին մասնագիտական ոլորտում հավատարմագրումների իրականացման միջոցով որակի մշակույթի թիրախային տարածումը և շարունակական բարելավման կայունության պահպանումը,
- ծրագրային ինքնագնահատման կարողությունների զարգացումը բուհերում,
- որակավորումների արժանահավատ շնորհման հավաստումը և միջազգային ճանաչելիության նպաստումը,
- փորձագիտական կարողությունների ձևավորումը տնտեսության բոլոր ոլորտներում և փորձագետների թվի ընդլայնումը,
- ՄՈՒՀ-երի և ոլորտի գործատուների համատեղ պատասխանատվությունը որակյալ աշխատուժի ձևավորման գործում, դրանց պրոակտիկության խթանումը: